# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## հրապարակային առաջարկի վերաբերյալ

01.07.2008թ.

Ուշադրություն

2008թ-ի հուլիսի 7-ից, մինչև 2008թ-ի հուլիսի 18-ը ներառյալ (10 աշխատանքային օր) հրապարակային առաջարկի միջոցով նախատեսվում է տեղաբաշխել «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերը՝ հետևյալ պայմաններով.

| | |
|---|---|
| Թողարկման ընդհանուր ծավալը՝ | 1,000,000,000 ՀՀ դրամ |
| Անվանական արժեքը՝ | 50,000 ՀՀ դրամ |
| Քանակը՝ | 20,000 հատ |
| Արժեկտրոնային տոկոսադրույքը՝ | 9.5% տարեկան |
| Շրջանառության ժամկետը՝ | 36 ամիս |
| Արժեկտրոնների վճարում՝ | կիսամյակային պարբերությամբ |

500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով (10,000 հատ) արտատոմսերը նախատեսվում է տեղաբաշխել բաց բաժանորդագրության միջոցով, իսկ մնացած 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով (10,000 հատ) պարտատոմսերը տեղաբաշխվելու են 05.06.2008թ. ձևավորված տեղաբաշխման խմբի շրջանակում («ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ):

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2008 թվականի հունիսի 28-ին: Պարտատոմսերի ազդագիրը հրապարակվել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (www.armswissbank.am) և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի (www.armrusgasprom.am) ինտերնետային կայքերում: Ներդրողները կարող են պարտատոմսերի ազդագիրը (էլեկտրոնային և/կամ թղթային տեսքով) ստանալ նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից:

Պարտատոմսերի բաժանորդագրությանը կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ներկայացնելով սահմանված կարգով լրացված պարտատոմսերի ձեռքբերման հայտը, որի ձևը ներկայացված է պարտատոմսերի ազդագրում: Հայտը կարող եք ստանալ նաև տեղում:

Հրապարակային առաջարկի շրջանակում պարտատոմսերը տեղաբաշխվելու են զեղչով՝ ներդրողների համար ապահովելով 10% ներդրումային եկամտաբերություն: Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է պարտատոմսերի ազդագրով սահմանված բանաձևով հաշվարկված գնով, որը կազմում է (ըստ տեղաբաշխման յուրաքանչյուր օրվա)՝

| Ամսաթիվ | Մեկ պարտատոմսի Հաշվարկված գին (10 լումայի ճշտությամբ) | Ամսաթիվ | Մեկ պարտատոմսի Հաշվարկված գին (10 լումայի ճշտությամբ) |
|---|---|---|---|
| 07.07.2008թ. | **49,365.5 ՀՀ դրամ** | 14.07.2008թ. | **49,455.1 ՀՀ դրամ** |
| 08.07.2008թ. | **49,378.3 ՀՀ դրամ** | 15.07.2008թ. | **49,468.0 ՀՀ դրամ** |
| 09.07.2008թ. | **49,391.1 ՀՀ դրամ** | 16.07.2008թ. | **49,480.8 ՀՀ դրամ** |
| 10.07.2008թ. | **49,403.9 ՀՀ դրամ** | 17.07.2008թ. | **49,493.6 ՀՀ դրամ** |
| 11.07.2008թ. | **49,416.7 ՀՀ դրամ** | 18.07.2008թ. | **49,506.5 ՀՀ դրամ** |

Տեղաբաշխող՝

ARMSWISSBANK
Private & Investment Banking

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0010, Խանջյան 13/2
հեռ.՝ 51-95-93, 52-95-93
ֆաքս՝ 52-95-91
Էլ-փոստ. info@armswissbank.am
www.armswissbank.am

Թողարկող՝

«ՀայՌուսԳազարդ» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43
Հեռախոս՝ (+374 10) 29 48 10
Ֆաքս՝ (+374 10) 29 47 24
Էլ-փոստ. inbox@armrusgasprom.am
www.armrusgasprom.am